

# ՌՈՒՍՍՈՅԻ ԱՆԳԼԻԱՅԻ ՀԵՏԵՎՈՐԴԸ «ԱԶԳԱՐԱՐԻ» ԷԶԵՐՈՒՄ

Մ. Մ. ԱՍԼԱՆՅԱՆ

«Ազգարարում» տպագրված գեղարվեստական արձակի առավել ծավալուն գործը անգլերենից թարգմանված «Փոքրիկ Ջեկի պատմությունը» վիպակն է<sup>1</sup>։ Մեզ հաջողվեց պարզել, որ վիպակի հեղինակը XVIII դարի անգլիացի հանրաճանաչ մանկագիր Թոմաս Դեյն է (Day Thomas—1748—1789)։ Նա եղել է Ժ.-Ժ. Ռուսսոյի մանկավարժական հայացքների առաջին հետևորդներից և տարածողներից մեկը Անգլիայում։ «Էմիլի» անգլերեն հրատարակությունը, որն անմիջապես հաջորդեց Ֆրանսերենին<sup>2</sup> և, մանավանդ, նրա հեղինակի այցը Անգլիա 1760-ական թթ., սկիզբ դրեցին Ռուսսոյի հայացքների ներթափանցմանը անգլիական իրականության մեջ։

Անգլիական մանկական գրականության պատմաբանները, խոսելով XVIII դարի վերջի գրականության վրա Ռուսսոյի ազդեցության մասին և ղիտելով այն որպես մեծագույն դրական երևույթ, նշել են, որ առավել զգալի ազդեցություն է կրել Թ. Դեյը<sup>3</sup>։ Դեյը համարվում է «էնցիկլոպեդիզմի» (ֆրանսիական էնցիկլոպեդիստների հետևորդները) ամենաաչքի ընկնող ներկայացուցիչը Անգլիայում։ «էնցիկլոպեդիստները» (Դեյ, Էլիզաբեթ Ինչբուդ) հակադրվեցին մանկագիրների կրոնաբարոյախոսական ուղղությանը, որը շարունակելով XVII դարի պուրիտանական գրականության ավանդույթները, ձգտում էր կրոնական իրատաբանությանը գրական երկերի ձև տալ<sup>4</sup>։

Դեյի ստեղծագործական կյանքը շատ կարճատև եղավ, նա մանկապատանեկան ընթերցանության միայն երկու գործ հրատարակեց, սակայն նրա երկերը անգլիական լուսավորական մտքի կարևորագույն հաղթանակներն էին մանկավարժության ասպարեզում։ «Առանց չափազանցության կարելի է ասել, որ Դեյը XVIII դարի խոշորագույն անգլիացի մանկագիրն է, իսկ նրա գիրքը այն ժամանակի մանկական գրականության խոշորագույն նվաճումը»<sup>5</sup>։ Դեյի ստեղծագործությունը համընկավ պատմական այնպիսի մի պահի հետ, երբ ազատագրական պայքարի հաղթանակը Ամերիկայում և նրա հետևանքով Անգլիայում ստեղծված քաղաքական ճգնաժամն ու բուրժուական «ռազմակալիզմի»<sup>6</sup> սրընթաց աճը, ինչպես նաև ֆրանսիական «էնցիկլոպեդիստների» հայացքների լայն տարածումը պայմանավորեցին լուսավորական ձգտումների մի նոր, վերջին պոթովումը։ 1780-ական թթ., երբ ստեղծագործեց Դեյը, սկիզբ

<sup>1</sup> «Պատմություն մանկան միոյ, զոր գտեալ եղեւ իբր երկօրեայ ի ծերե միոյ, զարգացալ կախմբ աշոյ, աշխատեցաւ անօգնական և ի վաղճանի էգիտ միթարութիւն կարողութեան օգնական լինել աղբատաց», թարգմանեալ յանգլիացիոց. «Ազգարար», Մադրաս, 1794, էջ 49 (այսուհետև՝ «Ջեկի պատմությունը»)։

<sup>2</sup> «Էմիլի» անգլերեն թարգմանությունը լույս տեսաւ 1762 թ. Emilius and Sophia or a New System of Education վերնագրով։

<sup>3</sup> Sylvia W. Patterson. Rousseaus Emile and Early Children's Literature. N. Y., 1971, p. 62.

<sup>4</sup> Н. М. Демурова. Из истории английской детской литературы XVIII—XIX вв. М., 1975, с. 12.

<sup>5</sup> Н. М. Демурова. Томас Дэй и его книга для детей «Сэндфорд и Мертон». —Сб. «Вопросы английской лексикологии». М., 1974, с. 85.

<sup>6</sup> Արմատական քաղաքական բարեփոխությունների կողմնակիցներ, որոնք, մանավորապես պահանջում էին դեմոկրատիզմի սկզբունքներով վերակառուցել անգլիական պառլամենտը և ընտրական սիստեմը։

առանձին տրամադրությունները, որոնք ֆրանսիական հեղափոխությունից հետո ավարտուն տեսք ստացան Քոմաս Փեյնի և Ուիլյամ Գոգվինի երկերում:

Դեյը ծնվել է Լոնդոնում, սովորել է Չարտերհաուզի դպրոցում և այնուհետև Օքսֆորդի համալսարանում: Տարված մարդու վերափոխության լուսավորական գաղափարներով, նա շուտով եկավ այն համոզման, որ «աշխարհի արատները ավելի բարոյական բնույթի են» և որ բոլոր չարիքները կարելի է վերացնել իմաստուն օրենքների միջոցով, որ «վատ օրենքներն են վատ մարդիկ ծնում»<sup>7</sup>: Դեյն ի վերջո իրավաբանի կոչում ստացավ, սակայն իրավաբանությամբ երբեք չզբաղվեց, որովհետև նրա բուն հետաքրքրությունների ոլորտը մանկավարժությունն էր<sup>8</sup>: „Rousseau has much to answer for“ (մեղավորը Ռուսսոն էր), գրում է Պիրսոնը: «Էմիլը» Դեյի վրա հսկայական տպավորություն էր թողել: Նրանում բովանդակած գաղափարները Դեյի համար հայտնությունների մի շարք էր:

Դեյի մանկավարժական հայացքների ձևավորման ողջ ընթացքը, նրա գործունեությունը և ստեղծագործությունը կապված է եղել ժամանակի ճանաչված մանկավարժ Ռիչարդ Էջվորդի հետ: Նրանք մտերմացել են Օքսֆորդում ուսանելու տարիներին: Տարվելով Ռուսսոյի մանկավարժական ուսմունքով, նրանք առաջիններն էին Անգլիայում, որ փորձ արեցին կիրառել այն կյանքում: Էջվորդը իր որդու դաստիարակությունը տարավ «Էմիլի» սկզբունքներով, իսկ Դեյը, որը նրա մշտական խորհրդատուն էր, այդ սկզբունքները կիրառեց դեռատի աղջիկներին ամուսնական կյանքի համար նախապատրաստելու ոգով դաստիարակելու և կրթելու իր գիտափորձում: 1771 թ. նրանք միասին Փարիզ այցի գնացին Ռուսսոյին: Սակայն Էջվորդը Ռուսսոյի ուսմունքի իր մեկնության մեջ եղել է ավելի չափավոր և որակվել է որպես նրա «հավասարակշռված» հետևորդը, որը գտնում էր, որ ի վիճակի չէ ամբողջապես ընդունել Ռուսսոյի տեսությունը: Այնինչ Դեյը բնութագրվում է որպես «կրթող», «մոլեռանդ» և ավելի հետևողական ուսուսույական<sup>9</sup>:

Լոնդոնի իրավաբանների կոլեգիայում (Միդլ Տեմպլ) ուսանելիս Դեյը մտերմական կապեր հաստատեց իր ժամանակի մի ուրիշ աչքի ընկնող անձնավորության՝ նշանավոր արևելագետ, լեզվաբան, իրավագետ Ուիլյամ Ջոնսի հետ: Որպես երրորդ դասի ամենաառաջադիմական թևի ներկայացուցիչներ, նրանք «Արքունական կուսակցության» կրքոտ և անզիջող հակառակորդներ էին: 1770-ական թթ. Գեորգ III-ի կամակատար, ռեակցիոն «թագի բարեկամներին» մինիստրության կառավարման տարիներն էին, երբ սլավոմենտը երկարատև քաղաքական անգործունեության վիճակ ապրեց: Ի վերջո, լորդ Նորտի այդ մինիստրության գործունեությունը (1770—1782) հասցրեց տոբիների կուսակցության կրախին: Այն տնտեսական կոնֆլիկտի մեջ մտավ հյուսիսամերիկյան գաղութների հետ, որը պատերազմի հանգեցրեց և ավարտվեց Անգլիայի պարտությամբ:

Դեյը և Ջոնսը քննադատում էին ամերիկյան գաղութներում անգլիական կառավարության վարած մաքսային քաղաքականությունը, իսկ այնուհետև հանդես եկան որպես ամերիկյան հեղափոխության ջերմ պաշտպաններ: Այդ տարիներին Դեյը դրեց մի շարք քաղաքական պամֆլետներ, որոնցում քննադատում էր ստրկությունը<sup>10</sup>, ամերիկյան ապստամբների դեմ ռազմական ուժեր

<sup>7</sup> S. H. Scott. The Exemplary mr. Day. A Philosopher in Search of the Life of Virtue and of a Paragon among Women. N. Y., 1935, p. 37.

<sup>8</sup> H. Pearson. Extraordinary Peoples. London, 1965, p. 117.

<sup>9</sup> A. Ellis. A History of Children's Reading and Literature. Oxford, 1968, p. 115—116.

<sup>10</sup> „A Fragment of a Letter on the Slavery of the Negroes“. Սա նրա քաղաքական ծրագրի շարադրանքն էր: Պամֆլետը հրատարակվեց նաև Նյու Յորքում ու Ֆիլադելֆիայում և ջերմորեն ընդունվեց արևելյան հասարակության կողմից:

ուղարկելը: Կայսերական Հռոմի պատկերումով այլաբանորեն քննադատում էր Քրիտանիայի արտաքին քաղաքականությունը: Երբ 1777 թ. անգլիական զորքերը ժամանակավոր հաղթանակ տարան Ամերիկայում, Դեյն իր «Ամերիկայի ամայացումը» պոեմում պատկերեց զաղութների ողբալի վիճակը: Այս կապակցությամբ որոշ ուսումնասիրողներ Դեյնին կշտամբել են: Սքոթը գրում է. «որինակ, որ նա Ջորջ Վաշինգտոնի «խառնիխուռն» կամավորներին պատկերել է որպես հերոսների, իսկ բրիտանացի զինվորներին՝ թուրք ենիչլիներին նման»<sup>11</sup>:

Դեյը, հավատարիմ Ռուսսոյի իդեալներին, անկեղծորեն ասում էր ամեն բնույթի ստրկությունը և դեմ էր ստրկավաճառությանը: Դրա արտահայտությունը հանդիսացավ նրա «Մեռնող նեղրը» պոեմը: Դեյին վրդովում էր, որ ամերիկացիները իրենց համար ազատություն պահանջելով, չէին մտածում ազատություն տալ սևամորթներին<sup>12</sup>:

1770-ական թթ. Դեյը հարեց օպոզիցիոն ամենաառաջադիմական, թեև խալտաբեղեղ խմբավորմանը, որին հովանավորում էր դուքս Ռիչմոնդը: Նրանք (Ջոն Ուիլքս, Կարտրայտ, Ուեբ և այլն) պահանջում էին համընդհանուր ընտրական իրավունք, համահավասար ներկայացուցչություն, տարեկան պառլամենտ: Դեյը Ջոնսի նման հայտարարում էր, որ ժողովուրդը իրավագոր պետք է լինի փոխելու օրենքները, որ թագավորները այլևս չպետք է իրենց հպատակներից հլու հնազանդություն սպասեն: Ելույթ ունենալով էսսեքսի «Ֆրիհոլդերների» միտինգում (1780 թ.), Դեյը կոչ էր արել «ապստամբել լավ կազմակերպված, զինված ուժերով»<sup>13</sup>: Այդ ժամանակ Դեյը անդամագրվեց նոր կազմակերպված «Սահմանադրական ինֆորմացիայի ընկերությանը»: Նրա ելույթները հրատարակվեցին ընկերության կողմից: Նրա անունը հայտնի դարձավ քաղաքական շրջաններում: Սակայն 1780 թ. ընտրությունները ամրապնդեցին թագի դիրքը: Ռեֆորմի շարժումը տեղատվություն ապրեց: Ամերիկյան պատերազմը շարունակվում էր, չնայած 1776 թ. անկախություն էր հռչակվել: Դեյը գրեց «Անգլիայի այժմյան վիճակի և Ամերիկայի անկախության մասին» պամֆլետը<sup>14</sup>, որում պաշտպանում էր գաղութներին բացարձակ ազատություն տալու միտքը: Պամֆլետը մի տարում չորս հրատարակություն ունեցավ: 1783 թ., երբ իշխանության գլուխ անցան «Նոր տոբիները» Ու. Պիտ կրտսերի զլխավորությամբ, նա գրեց իր հաջորդ պամֆլետը՝ «Մարիուսի նամակները կամ խորհրդածություններ խաղաղության, արևելա-հնդկական օրինագծի և այժմյան ճգնաժամի մասին»: Ռեֆորմի համար մղվող պայքարից նա հիասթափվել էր, այլևս չէր հավատում, որ պառլամենտի ռեֆորմը կվերացնի հասարակական կյանքում եղած թերությունները և աղքատությունը: Նա հեռացավ քաղաքականությունից: 1783 թ. Սերբեյի կոմսության էնիսգլաի վայրում Դեյը գնեց մի ֆերմա, նպատակ ունենալով իրագործել գյուղացիության մեջ բարոյական և դաստիարակչական բարեփոխումների իր ծրագիրը:

Էնիսգլաիում Դեյին սկսեցին զբաղեցնել սոցիալական անհավասարության պրոբլեմները: Չորս կողմը շատ թշվառություն և հետամնացություն կար, իսկ Դեյին խորթ էր անտարբեր դիրքը չարիքի հանդեպ: Նա ջանում էր գտնել թշվառության պատճառները և այն վերացնելու միջոցները: Սակայն Դեյի ուշադրության կենտրոնում այնուամենայնիվ մանուկների դաստիարակության խնդիրներն էին: Մարդը ճիշտ հունի մեջ պետք է դրվի մանկուց: Նոր իդեալներին համապատասխան անձի կատարելագործման և բարեփոխման նախապայմանը, ըստ Դեյի, նոր, առաջադիմական, այսինքն ռուսոյական մանկավարժական սկզբունքները կիրառելն էր: Ամենաառաջնահերթ խնդիրը մանուկ-

<sup>11</sup> S. H. Scott. Op. cit., p. 124.

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 123:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 152:

<sup>14</sup> Reflection upon the Present State of England and the Independence of America. London, 1776.

ներին համապատասխան գրականությունը ապահովելն էր: Պիտանի գրքեր շատ քիչ կային: Դեյի կարծիքով միայն մի քանի գիրք կարելի էր առաջարկել պատանիներին՝ «Ռոբինզոն Կրուզոյի» մի մասը, Պլուտարքոսի «Կենսագրություններից» որոշ պատմություններ և Հենրի Բրուկի «Fool of Quality» ֆանտաստիկ վեպի սկիզբը, ուր պատկերված է հերոսի մանկությունը<sup>15</sup>: Ռ. էջվորդի խորհրդով Դեյը ձեռնարկեց մանկապատանեկան ընթերցանության գիրք ստեղծելուն: Սկզբում նա մտադրվեց գրել ոչ մեծ պատմվածքների մի շարք, որոնցից յուրաքանչյուրը դաստիարակության ուսսոյական որևէ դրույթի կիրառումը պատկերեր և որոնք հետաքրքրական լինեին մանուկների համար: Սուկայն աշխատանքի ընթացքում նրա երկը վիպական ծավալ ստացավ:

1783 թ. Ստոդեյլի հրատարակությամբ լույս տեսավ Դեյի «Սենդֆորդի և Մերտոնի պատմությունը»<sup>16</sup>: Նրա հաջողությունն այնքան մեծ էր, որ դրանց հեղինակին գրել շարունակությունը. 1786 թ. լույս տեսավ գրքի երկրորդ մասը, 1789 թ.՝ երրորդը: Սա առաջին մանկական վեպն է Անգլիայում: «Հազար ու մի գիշերվա հեքիաթների», «Ռոբինզոն Կրուզոյի» և «Գուլիվերի ճանապարհորդությունների» կրճատ տարբերակների ու էլի մի երկու գրքերի հետ «Սենդֆորդ և Մերտոնը» դասվել է XVIII դարի անգլիական մանկապատանեկան ամենաշատ կարդացվող գրքերի շարքը: Նա հսկայական ազդեցություն է ունեցել ոչ միայն XVIII դարի, այլև XIX դարի առաջին կեսի մանկական գրականության վրա և մանկական խրատական գրքերից ամենատարածվածն է եղել: Մանկական գրականության տեսաբան Հ. Դարտոնը «Սենդֆորդ և Մերտոնը» համարում էր «իր տեսակի մեջ մեծագույն գիրքը»<sup>17</sup>:

Եթե Ռ. էջվորդը իր «Գործնական մանկավարժություն» ձեռնարկով Ռուսսոյի մանկավարժական ուսմունքի անգլիական տարատեսակի շարադրողը հանդիսացավ, ապա Դեյը նրանից դեռ մի տասնամյակ առաջ փորձեց «էմիլի» մանկավարժական սկզբունքները գեղարվեստական կերպարների միջոցով հասցնել անգլիացի մանուկներին:

Իր վեպում Դեյն ամփոփեց Ռուսսոյի մանկավարժության բոլոր հիմնական դրույթները, որոնցով ղեկավարվելով Բարլոն դաստիարակում է իր սաներին՝ Հենրի Սենդֆորդին և Թոմաս Մերտոնին: Այստեղ և՛ ուսուցման տարիքային սկզբունքն է, և՛ տղաների եսը չճնշելն ու նրանց բնությանը մոտ դաստիարակելը, և՛ ֆիզիկապես կոփվելը, և՛ աշխատանքի վարժեցնելը և այլն:

«Սենդֆորդ և Մերտոն» վեպի սյուժեն հիմնված է հակադրությունների վրա, որը XVIII դարի բարոյախոսական ուղղության գրողների սիրած հնարանն էր: Վեպի սկզբում Դեյը մեղ ներկայացնում է տարբեր պայմաններում և տարբեր ձևով դաստիարակված երկու տղաների: Հեղինակի կարծիքով ներանցից Հենրին ունի մի ակնհայտ առավելություն. նա աշխատավորի ընտանիքից է: Վեպի սկզբում Ստենդֆորդը փրկում է Մերտոնին թունավոր օձից և արժանանում է նրա հոր երախտագիտությանն ու համակրանքին, որը և երկու տղաներին ուսման է տալիս քահանա Բարլոյի մոտ: Բարլոյի կերպարը ստեղծելիս Դեյը աչքի առաջ ունի էմիլի դաստիարակին: Սա նոր տիպի մանկավարժ է: Հետևելով Ռուսսոյին, Դեյը նույնպես մերժում է ֆեոդալական-սխոլաստիկական դաստիարակությունը և պատկերում է մանկավարժության նոր, դեմոկրատական սկզբունքների կրողին, որն ի վիճակի է ձևավորել աշխատասեր և առաքինի քաղաքացիների: Բարլոյի հիմնական թեզերից մեկն այն է, որ մարդկանց մասին պետք է դատել ըստ նրանց օգտակարության: Ամեն մարդ պետք է օգտակար գործունեությամբ զբաղվի: Աշխատավորները, որոնք ստեղծում են նյութական բարիքներ, նախընտրելի են պորտաբույծ վերնախավի ներկայացուցիչներից: Բարլոն իր միտքը հիմնավորում է ուսանելի օրինակներով: Դրան-

<sup>15</sup> S. H. Scott. Op. cit., p. 59.

<sup>16</sup> M. Day. The History of Sandford and Merton. A Work Intended for the Use of Children. London, 1783.

<sup>17</sup> F. Y. Harvey Darton. Children's Books in England. London, 1958, p. 146.

ցից է «Շնորհաշատ աղքատի և ապաշնորհ հարուստի պատմությունը»: Օտար վայրում հարուստը իրեն շատ անօգնական է զգում և ընկնում է ողորմելի վիճակի մեջ, իսկ աղքատը հաղթահարում է բոլոր դժվարությունները: Այստեղից էլ աշխատանքային դաստիարակությանը հատկացված առանձնակի տեղը վեպում: Բայց Ռուսոն այն համոզմանն էր, որ աշխատավորի երեխան արդարիս դաստիարակության կարիք չունի, որովհետև նրա ուսուցիչն է ինքը կյանքը: Այն անհրաժեշտություն է ազնվականների, հարուստների երեխաների համար: Նրա էմիլը ազնվական ընտանիքից է: «Սենդֆորդ և Մերտոնը» նույնպես մի վեպ է հարուստի տղայի վերահաստիարակության մասին: Նրանում պատմվում է, թե ինչպես Թոմաս Մերտոնը վերջիվերջո դառնում է նույնպիսի մի դրական անձնավորություն, որպիսին Հենրի Սենդֆորդն էր: Սակայն նրան դաստիարակում է ոչ միայն ուսուցիչը, ինչպես «էմիլում», այլ նաև Հենրին: Իր աշխատասիրությամբ, ողջամտությամբ և այլ առաքինություններով Հենրին մշտապես օրինակ է ծառայում Թոմի համար, որը միառժամանակ ապրում է Սենդֆորդների տանը: Այստեղ Թոմը նախ և առաջ ընտելանում է աշխատավոր ընտանիքի պարզ ապրելակերպին: Տղաները մասնակցում են գեղջկական բոլոր աշխատանքներին: Եթե էմիլը դարբնություն է սովորում, Թոմը տիրապետում է հյուսնի արհեստին: Վերջում Թոմը առում է Հենրիին. «Դու ինձ հասկացրիր, որ ավելի լավ է լինել օգտակար, քան հարուստ, բարի և հաճելի, քան տիտղոսավոր»<sup>18</sup>:

«Ստենդֆորդ և Մերտոնի» երկրորդ մասը դեռ լույս չտեսած Ստոքդելլե հրատարակած «Մանկական ժողովածուում» տպագրվեց Դեյի հաջորդ դործը՝ «Փոքրիկ Ջեկի պատմությունը» վիպակը<sup>19</sup>: Այն պատանի ընթերցողների համար ավելի գրավիչ և հետաքրքիր դարձնելու նպատակով Դեյը դիմեց արկածային-ճանապարհորդական սյուժեի: Նա իր հերոսին՝ Ջեկին, ուղարկում է հեռավոր երկրներ (նախորդում դրանց մասին պատմում է ուսուցիչ Բարոնը): «Սենդֆորդ և Մերտոնի» համեմատությամբ «Ջեկի» սյուժեն ավելի կուռ է, բոլորովին ազատ կցովի խրատական պատմություններից, իսկ հերոսի կերպարը ավելի ունակ է և բնական: Ջեկը ընկեցիկ է, որին դեռ բարոսի մեջ իր դուռն շեմին գտել է և որդեգրել մի աղքատ ծերունի: Վիպակի առաջին մասը մանկավարժական առումով «Սենդֆորդ և Մերտոնի» կրկնությունն է: Այստեղ նույնպես հաստատվում է Ռուսոյի այն թեզը, որ աշխատավոր մարդկանց երեխաները ավելի ճիշտ են դաստիարակվում: Ծերունին, ուր հազիվ գրագետ է, Ջեկին դաստիարակում է բնության և բանականության օրենքներով: Նա ջանում է, որ տղան լինի առողջ և ամրակազմ, նրան ըմբշամարտել է սովորեցնում: Ծերունու մյուս հոգսը Ջեկին առաքինի մարդ դարձնելն է, այն, որ նա լինի ազնիվ, ճշմարտախոս, համեստ, բարեպաշտ, կարեկցող: Այնուհետև նա Ջեկին գրել կարդալ է սովորեցնում (ավելի վաղ, քան թույլատրում է Ռուսոն), և որովհետև թուղթ ու մատիտ չունեն, տառերը գրում էր փայտով, հողի վրա: Ծերունին Ջեկին ընտելացնում է առօրյա աշխատանքներին: Ջեկը օգնում է իր խնամակալին տնային գործերում, ուտելիք պատրաստելիս, այգում աշխատելիս: Այսպիսով, Ջեկը անհրաժեշտաբար և ոչ թե կանխամտածված դաստիարակվում է Ռուսոյի սկզբունքներով: Ծերունու մահից հետո Ջեկը ստիպված է 12 տարեկանից հույսը դնել միայն իր ուժերի վրա: Սկզբում նա աշխատում է մի գյուղացու մոտ, դարբնություն է անում, այնուհետև ծառայում է ազնվականի տանը որպես ձիապան և այստեղից անարդարացիորեն վճարվելուց հետո վարձու զինվոր է դառնում և ուղարկվում Հնդկաստան:

Դեյը ընկեցիկի թեմային դիմեց որոշակի նպատակով՝ ցույց տալ հերոսի կյանքի ամենաանբարենպաստ նախադրյալները և դրանով իսկ ընդգծել, որ նա ամեն ինչի հասել է սեփական ուժերով: Դա մի պատմություն է, թե ինչ-

<sup>18</sup> Sandford and Merton, p. 458.

<sup>19</sup> M. Day. The Life and History of Little Jack who was suckled by a goat. London, 1788; „The Children's Miscellany“.

պէս ճիշտ դաստիարակութեան շնորհիվ Զեկը հասակ է առնում՝ օժտւած անհրաժեշտ հատկութիւններով: Նա աշխատասեր է, տիրապետում է արհեստներին, առաքինի է, ապավինում է միայն սեփական ուժերին և վերջ ի վերջո հաղթահարում է կյանքի բոլոր ծախորդութիւնները և դժվարութիւնները:

Հնդկաստանի ճանապարհին Զեկը Աֆրիկայան մայր ցամաքի և Մադագասկարի միջև ընկած Կոմորյան կղզիներէջ մեկում որսի դուրս գալով կատակի համար չի արձագանքում իրեն որոնողների կանչերին: Նա վը հեռանում է թողնելով նրան անմարդաբնակ կղզում, մինչև որ ամիսներ անց մի անգլիական նավ նրան հասցնում է Հնդկաստան: Զեկի կյանքի այդ դրվագը դիտւում է որպէս «Ռոբինզոն Կրուզոյի» հետաքրքիր ընդօրինակութիւններից մեկը: Վիպակի 3-րդ մասում հաստատւում է, որ անծանոթ երկրում, անսովոր պայմաններում, աշխատասիրութիւնը, արհեստներ իմանալը (Զեկը հմուտ թամբագործ է, պաշտագործ, ձի պաշտող և այլն), օգտակար գործունեութիւնը փրկում են հերոսին: Կղզին թողնելուց հետո Զեկը հայտնւում է Հնդկաստանի սահմանամերձ մի վայրում, մասնակցում է թաթարական ցեղախմբի դեմ անգլիացիների մղած ռազմական գործողութիւններին և զերի ընկնում: Թաթարական խանի սիրելի ձին բուժելուց հետո նա պահւում է այդտեղ որպէս խանի հյուրը:

Բնիկներին Դեյը պատկերել է մեծ համակրանքով: Նրանք ռազմամուլ չեն, արդարամիտ են, պատրաստ եմրոպացիներից ընդօրինակել օգտակար սովորութիւններ, ինչպէս օրինակ՝ ձի պաշտելը, եմրոպական թամբ օգտագործելը և այլն: Սակայն Դեյի վիպակում «բնական վիճակի» փառաբանութիւնը ծառայում է ոչ թե քաղաքակրթութեան արատների բացահայտմանը, ինչպէս դա Ռոսսոյի մոտ է, այլ գաղութարարութեան քննադատութեանը: Դա արտահայտւել է ոչ միայն բնիկների նկատմամբ համակրանքի դրսևորումներում, այլև գաղութարարների հասցեին արված քննադատական դիտողութիւններում: Այսպէս, երբ Զեկը մնում է անծանոթ կղզում, նա սկզբում որոշում է կղզիաբնակների որոնել, սակայն իսկույն հրաժարւում է այդ մտքից: «Հնարավոր է, — մտածում է նա, — որ նրանք իրեն վատ ընդունեն և հետք վարվեն այնպէս, ինչպէս սպիտակները վարվում են սևամորթների հետ, երբ վերջիններս իրենց ձեռքն են ընկնում»: Զեկի հանրօգուտ գործունեութիւնը հարգանքի և երախտագիտութեան զգացմունքներ են առաջացնում բնիկների մէջ: Եվ երբ հասնում է նրա ազատութեան ժամը, թաթարական խանը նրան նվերներով է ճանապարհ դնում: Վերադառնալով Անգլիա, Զեկը նորից դարբնութեամբ է զբաղւում, նյութական ապահովութեան հասնում: Նա ունի իր տունը, իր հողակտորը և իրեն նվիրում է բարեգործութեան:

Դեյի դեմոկրատիզմը արտահայտւել է նրանում, որ դրական հատկութիւնների կրողները նրա մանկական գրքերում ոչ թե երրորդ դասի ներկայացուցիչներ են, ինչպէս դա ընդունված էր XVIII դարի գրականութեան մէջ, այլ՝ դյուղացու, աղքատ մարդու որդիները: Դեյը հետեց Ռոսսոյին ոչ միայն մանկավարժութեան մէջ: Նրան մոտ են նաև ֆրանսիացի լուսավորչի սոցիալ-քաղաքական հայացքները: Նա իր երկերում արտացոլեց կյանքի սոցիալական անհավասարութիւնը և ցույց տվեց իր բացասական վերաբերմունքը այդ իրողութեան հանդեպ: Սոցիալական անարդարութեան պատկերումը Դեյի մոտ սերտորեն շաղկապւում է մարդկանց բնական հավասարութեան և ազատութեան մասին դատողութիւնների հետ: Ելնելով Ռոսսոյի այն թեզից, որ մարդու բնական իրավունքներից առաջինը ազատութիւնն է, Դեյն իր մանկավարժութեան մէջ մերժեց երեխայի անհատականութիւնը անտեսելը, չգիտակցված հնազանդութիւնը և այլն: Նա համոզված է, որ անկաշկանդ զարգացող երեխան կդառնա իսկական նոր մարդ, որ երեխան պետք է ստանա կենսութաւ դաստիարակութիւն, ապրի օգտակար, գործունյա կյանքով:

Դեյի վիպակը «Ազդարարում» տպագրելը մեզ շատ բան է ասում ամսագրի խմբագիր Զ. Շմալտնյանի և նրա գործընկեր-լրագրողների առաջադիմական դիրքորոշման մասին: Դա վկայութիւնն է այն բանի, որ Զ. Շմալտնյանը ոչ միայն հանդես չի եկել որպէս «Հին խավերի ներկայացուցիչ», չի ձգտել

«պատենեշներ ստեղծել» առաջադիմական, նոր: զաղափարների մուտքը հայկական միջավայր թափանցելու ճանապարհին, որպիսի կարծիք է հայտնվել մեր բանասիրության մեջ, այլ հակառակը, իր ամսագրով նա այդ նոր գաղափարների առաջին արձագանքողներից եղավ: Մենք ամենայն իրավամբ կարող ենք ասել, որ «Ջեկի պատմության» տպագրությամբ «Ազդարարը» հայության մեջ ժ.-ժ. Ռուսսոյի մանկավարժական հայացքների առաջին տարածողը եղավ: Եթե նույնիսկ ենթադրենք, որ հայ գործիչներին հայտնի չէր, թե Դեյը հանդես է գալիս որպես Ռուսսոյի հետևորդը, որը քիչ հավանական է, քանի որ Անգլիայում նրա «Սենդֆորդ և Մերտոնի» լույս տեսնելու պահից նշվել է ուղղակի կապը Ռուսսոյի ուսմունքի հետ, ապա տպագրելով նրա վիպակը, նրանք բացահայտել են իրենց համափրանքը նման զաղափարների հանդեպ:

Ե՞րբ էր Ռուսսոյի անունը ծանոթ դարձել հնդկահայերին: Գրավոր առաջին հիշատակությունը մենք գտնում ենք նույն «Ազդարարի» էջերում: 1795 թ., վիպակի տպագրությունից մի քանի ամիս հետո «Ազդարարում» ղեկավարված է վաճառական Մարգար Խալզարյանի ծանուցումը Մադրասում կազմակերպված ցուցահանդեսի (պատկերահանդես և արձանահանդես) մասին<sup>20</sup>: Այդ ծանուցման մեջ, որը ցուցահանդեսի կատալոգի նման մի բան է, ի թիվս մյուս նշանավոր անձանց, որոնց դիմաքանդակները կամ դիմանկարները ցուցադրված էին, թվարկված են ֆրանսիական հեղափոխության գործիչները՝ մարկիզ Լաֆայետը, Միրաբոն, Կոնվենտի անդամ աբբատ Մարիվոն ու «գերահռչակ» հեղինակներ Վոլտերը և Ռուսսոն: Ֆրանսիացի լուսավորիչներին այս կերպ ներկայացնելն արդեն վկայում է, որ նրանց մեծություն լինելն արդեն հայտնի էր և ընդունվում էր «Ազդարարի» կողմից: Սակայն եթե Վոլտերի գործերից ինչ-որ բան հայերեն արդեն տպագրվել էր<sup>21</sup>, ապա Ռուսսոյի մասին մադրասահայերը կարող էին միայն լսած լինել:

Ծավալելով իրենց լուսավորական գործունեությունը, հայ գործիչները իհարկե ամենից առաջ մտահոգված էին աճող սերնդի դաստիարակության և կրթության խնդիրներով, որովհետև այն ապագան, որի մասին նրանք երազում էին, պետք է իրականանար այդ սերնդի ջանքերով: Այս բանը նրանք շեշտել են բոլոր պատեհ առիթներով: «Նոր տետրակ, որ կոչի հորդորակում» (1772 թ.) Մ. Բաղրամյանը հայտարարում էր, որ իր նպատակն է «թափեցնել «երիտասարդացն» և մանկանցն Հայկազանց ի վեհերոտեալ և ի հեղգեցեալ թմրութենէ քնոյ ծուլութեան», որ այն տպագրում է «ի յոգուտ թարմահասակ և նորափթիթ մանկանցն հայոց»: Տեր Թադեոս Սոգինյանցը լույս է ընծայում իր «Ողբ Հայաստանեագր» (1791 թ.), «ի յորդորումն մանկանց հայոց»: Հ. Էմինը, 1792 թ. Լոնդոնում հրատարակելով իր հուշագրությունները, հույս է հայտնում, որ հայ երիտասարդները, եթե նույնիսկ նրանք անգլերենին լավ չեն տիրապետում, հեշտությամբ կկարդան և կհասկանան իր շատ պարզ շարադրված գիրքը, որը նա հուսով է՝ «կլուսավորի նրանց միտքը», «կարթնացնի նրանց քրնից», «մինչև որ նրանք բացեն իրենց աչքերը և ըմբռնեն ազատության իսկական իմաստը, որին ողջ Արևելքը իր արարման օրից եղել է և մնում է անտեղյակ»<sup>22</sup>:

Հ. Եմամյանի շատ հորդորները «Ազդարարում» անմիջապես ուղղված են երիտասարդությանը: Նա խոստովանում է, որ իր ժողովրդի և մանավանդ երիտասարդության ուսումնաստենչությունն է իրեն դրդել հրատարակչական

<sup>20</sup> «Ազդարար». 1795, էջ 552:

<sup>21</sup> Սոգինյանցը իր «Տետրակ, որ կոչի ողբ Հայաստանեաց» (1791) հրապարակախոսական գործում ղեկավարվել էր Վոլտերի կենսագրական ակնարկը Պետրոս I-ի մասին (անգլերենից թարգմանված): Հոգևոր Էմինի «Հուշագրություններում» նույնպես հիշատակվում է Վոլտերի անունը և նշվում Պրուսիայի թագավոր Ֆրիդրիխ II-ի հասցեին արված նրա քննադատական, երգիծական ելույթների մասին (տե՛ս The Life and Adventures of Iosep Emin. London, 1792 p. 163—164.

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 484:

գործունեությունն ձեռնարկելու նրա տպարանում տպագրվում են Պաղտասար Դպիրի «Մայրենի լեզվի քերականությունը» (1791 թ.), Պորփյուրի «Գիրք ներառության» (1793 թ.), Դավիթ Անհաղթի «Գիրք Սահմանաց» (1797 թ.) փոխադրական երկերը և իր «Գիրք անուանեալ ղեկավար մանկանցը» (1797 թ.), որոնք պետք է ծառայեին երիտասարդության մտավոր զարգացմանը և բարոյաէթիկական դաստիարակությանը: «Ազդարարի» թղթակից «Ուրախակից բարեկամը» իր ուղերձում գրում էր Շմավոնյանին. «Դու երկայնամտեալ կամեցար այսու գոնեա յորդորել մանկանց ի սեր ընթերցման և դիտութեան»<sup>23</sup>: Ամսագրի հրապարակախոս «Հայրդի հայը», քննադատելով հին սերնդի պասսիվ դիրքը, հայտարարում էր, որ միայն երիտասարդները կկարողանան նպաստել միաբանության և ազատության գործին<sup>24</sup>:

Անձի կատարելագործության գաղափարը, որը պետք է հանգեցներ հասարակության կատարելագործությանը, XVIII դարի վերջերին որդեգրվեց նաև հայ գործիչների կողմից: XVIII դարի մանկավարժական նոր տեսությունները, կոկկի և Ռուսոյի դարաշրջան կազմող ուսմունքները կոչված էին ծառայելու կատարելագործության այդ գաղափարին: Բնականաբար, հայ լուսավորիչները պետք է անտարբեր չմնային մանկավարժության ասպարեզի այն նորույթներին, որոնք գալիս էին Արևմուտքից: Հայ առաջադեմ մտավորականները, շնորհիվ օտար լեզուների իրենց իմացությանը, ծանոթանում են մանկավարժական մտքի նորագույն նվաճումներին:

Այդ տարիներին ուսուցման նոր մեթոդներ կիրառելու փորձեր են արվել հենց Մադրասում: Այստեղ 1790-ական թթ. իր մանկավարժական գիտափորձերն էր անցկացնում ուսուցման «Մադրասյան սիստեմի» հիմնադիր էնդրյու Բելը<sup>25</sup>: Նա Մադրասի անգլիական եկեղեցու քահանան էր և տղաների որբանոցի հոգաբարձուն: Այստեղ էլ նա առաջին անգամ փորձարկեց «փոխադարձ ուսուցման» իր մեթոդը, որը XIX դարի սկզբներին մեծ տարածում ունեցավ Անգլիայում և այլ երկրներում:

Բելի ներկայությունը Մադրասում և նրա մանկավարժական գործունեությունը չէր կարող աննկատ մնալ: Այդ տարիներին ոչ մեծ այդ քաղաքի տարբեր եկեղեցիների քահանաները պետք է որ իրար ճանաչեին: Բացառված չէ նաև ուսուցողական փորձի փոխանակումը: Սամուել քահանա Տեր-Փիլիպոսյան Ղայթմաղյանցը<sup>26</sup>, բաղմակողմանի զարգացած մի անձնավորություն, մանկավարժ, գրող և թարգմանիչ, Մադրասում իր դպրոցը բացելով (1791 թ.), դասավանդման նոր մեթոդներ էր արմատավորել: Ղայթմաղյանցի մասվան տարեկիցի առթիվ նրա աշակերտներից մեկի գրած մահախոսականում նկարագրված են ուսուցման այն ձևերը, որ գործադրել էր գիտուն մանկավարժը<sup>27</sup>: Հնարավոր է, որ Բելի կամ մի որևէ ուրիշ կրթված մադրասաբնակ անգլիացու միջոցով հայերը առաջին տեղեկությունները ստացած լինեն Ռուսոյի մանկավարժական սկզբունքների մասին:

XVIII դարի արևմտաեվրոպական լուսավորիչների հասարակական-քաղաքական տեսություններին հնդկահայերը ծանոթացել էին «Ազդարարի» երեկվան գաղուց շատ ավելի առաջ: Հ. էմինը, որը 1750-ական թթ. ապրել էր Անգլիայում և ծանոթացել XVIII դարի քաղաքական նորագույն դոկտրինաներին, առաջինն էր, որ հայկական միջավայրում հանդես եկավ դրանց քարոզով: Նրա

23 «Ազդարար». 1795, էջ 143—144:

24 Նույն տեղում, էջ 298:

25 Andrew Bell (1753—1832)— անգլիացի մանկավարժ, հոգևորական, Զ. Լանկաստերից առաջ կիրառեց փոխադարձ ուսուցման իր մեթոդը, որը հետագայում «Բել-Լանկաստերյան սիստեմ» անունը ստացավ: 1797 թ. վերադառնալով Անգլիա, Բելը հրատարակեց «Ուսուցման փորձ, կիրառված Մադրասի տղաների որբանոցում» դիրքը:

26 Ղայթմաղյանցի մասին տե՛ս Մ. Հ. Մխիթարյան. Հարություն Շմավոնյանը և նրա գործակիցները. «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 4, էջ 132—144:

27 «Ազդարար». 1795, էջ 164—172:

դինակիցը և համախոհը՝ Մ. Բաղրամյանը, բնակություն հաստատելով Մադրասում և ավելի խորանալով նոր գաղափարախոսության յուրացման մեջ, իր «Նոր տեսողությամբ» ազատագրված Հայաստանի ապագան արդեն կապում էր այնպիսի հասկացությունների հետ, որպիսիք էին «սահմանադրությունը», «ժողովրդի ինքնավարությունը» և այլն: Այնուհետև Հ. Շահամիրյանը «Որոգայթ փառացում» առաջին անգամ նկարագրեց ապագա Հայկական հանրապետության պետական, օրենսդրական կառուցվածքը: Նրա հեղինակը, մերժելով բացարձակ միապետության սկզբունքը, պահանջում էր, որ ժողովուրդը ինքը ստանձնի օրենսդիր մարմնի դերը, որ կայուն օրենքները և օրինականությունը պետության հիմքը հանդիսանան: Շահամիրյանը վկայակոչում էր անգլիական սահմանադրական միապետությունը, հիշատակում էր Հյուսիսային Ամերիկայի ազատագրական պայքարը և Ջ. Վաշինգտոնին, բացահայտելով, այսպիսով, իր գաղափարական կապը անգլիացի ռադիկալների հետ: Եվ, վերջապես, Ծ. Շահամիրյանը իր «Նշավակում» (1783 թ.) շարադրեց Մադրասի հայ համայնքի ինքնավարության կանոնադրությունը: Մադրասյան համայնական ինքնավարությունը մի փորձ էր գործողության մեջ դնելու ժողովրդի ինքնավարության, բոլոր քաղաքացիների իրավական հավասարության և ազատության սկզբունքը: Այդ համայնքի գերագույն իշխանությունը «բոլոր ժողովրդի», «յամահավասար ժողովրդույ» ընդհանուր ժողովն էր<sup>28</sup>:

Այդ առաջադիմական հասարակական-քաղաքական իդեանների գեղարվեստական մարմնավորումը հայերը գտնում են Ֆրանսուա Ֆենելոնի «Տելեմաքի արկածները» (1699) վեպում: Մարգար Նրեանցու թարգմանությամբ այն տրվագրվում է 1793 թ. Նոր-Նախիջևանի հայկական տպարանում<sup>29</sup>, որը Արդուիյանը Պետերբուրգից տեղափոխել էր Սուրբ Ղազար վանքը: Գրքի օրինակները ուղարկվեցին Հնդկաստան և այլ գաղթօջախներ: Հ. Շավուսյանը անմիջապես արձագանքեց և «Ազդարարում» տպագրված հայտարարությունով պրպագմեց Ֆենելոնի գիրքը, որը, — ասում է նա, — թեև գրական ստեղծագործություն է և ոչ թե եղելություն, անհրաժեշտ է կարդալ, «որպեսզի Մենտորի խրատաբանությունները, բարեպաշտ թարգմանչի ջանքերով ի վերայ տախտակի մերոյ և մանկանց հայոց» տպավորվի<sup>30</sup>:

Ուսանելի շրջագայությունները՝ բարոյափրկիսոփայական, քաղաքական հետևություններով, վեպի ձևով շարադրված, XVIII դարում մեծ տարածում ստացան: Իրական ճանապարհորդական նոթերի կողքին ստեղծվում էին երևակայական ուղեգրություններ: Նրանց հերոսները ազատախոհ մարդիկ էին, անկաշկանդ իրենց ձեռնարկումներում, լի աշխարհի հանդեպ բուռն հետաքրքրությամբ: Ֆենելոնը այս գրական ավանդույթի սկզբնավորողներից էր: «Տելեմաքի արկածներում», որն իր ձևով «անտիկ» վեպ և բովանդակությամբ՝ «Ողիսականի» շարունակությունն է, Ֆենելոնը քննադատեց բռնակալական կարգը և փառաբանեց լուսավոր միապետության սկզբունքը:

Պատանի Տելեմաքը մեկնելով հորը՝ Ողիսեսին որոնելու, որը տրոյական պատերազմից տուն չէր դարձել, իր թափառումների ժամանակ լինում է գանազան երկրներում և հասարակական ապրելակերպի տարբեր ձևերի է հանդիպում: Նրա դաստիարակ Մենտորը նրան ծանոթացնում է կառավարման տարբեր սկզբունքների, լավ և վատ միապետների հետ: Այս բոլորը պետք է դաս ծառայեր Իթակեի ապագա տիրակալի համար: «Պետք է իշխեն օրենքները և ոչ թե մարդիկ», — ասում է Մենտորը: Սա սահմանադրական միապետության հիմնական պահանջն էր: Իզուր չէ, որ XVIII դարի ընթացքում Ֆենելոնի

28 Տե՛ս թ. Ա վ դ ա յ ր ե գ յ ա ն. Շահամիր Շահամիրյանն ու Հնդկահայոց համայնական ինքնավարությունը 18 դարում. «Հայագիտական հետազոտություններ», Երևան, 1966, էջ 255—272:

29 Ֆրանչեսկո Ֆենելոն. Պատմություն Թելեմաքի, որդիոյ Յոզիսի. հ. I—II, թարգմ. Մարգար Նրեանցի. Նոր-Նախիջևան, 1793:

30 «Ազդարար». 1795, էջ 319:

գիրքը Անգլիայում քսան անգամ հրատարակվեց: Ֆենելոնը քարոզում էր խաղաղություն, կրոնական հանդուրժողականություն, լուսավորություն: «Տելեմաքի» հայերեն հրատարակիչը, ինչպես և «Ազդարարի» խմբագիրն ու աշխատակիցները գիտակցում էին, որ Ֆենելոնի վեպը մեծ չափով կնպաստի նոր հասարակական-քաղաքական հայացքների տարածմանը հայության մեջ և կգրավի երիտասարդությանը իր հերոսներով, անտիկ աշխարհի գունեղ պատկերներով, դարձանալի արկածներով: Եվ իրոք, գրավիչ սյուժեի ու պատմեկաձևի շնորհիվ վեպը հետագայում դարձավ պատանեկան ընթերցանության գիրք:

Ֆենելոնը փիլիսոփայական-քաղաքական վեպի ստեղծողը հանդիսացավ: Նրա վեպի հաջողությունն այնքան մեծ էր, որ միայն 1699 թ. քսան վերահրատարակություն ունեցավ: Նույն տարում վեպը թարգմանվեց անգլերեն: Նոր Նախիջևանում նույնպես գիրքն ունեցավ երկու վերահրատարակություն (1794, 1795 թթ.):

Սակայն լուսավորության գաղափարախոսության քարոզն ավելի լայն առումով (բարոյաէթիկական, մանկավարժական, գեղագիտական և այլն) մենք գտնում ենք «Ազդարարի» էջերում: «Ազդարարը» առաջինն էր, որ գաղղոթհայությունը ժանտթացրեց լուսավորության դարի անգլիական գեղարվեստական արձակի նմուշներին: «Ջեկի պատմության» տպագրությամբ հայ երիտասարդներին հնարավորություն ընձեռվեց իրենց մասն ունենալ նույն հոգևոր սնունդից և նույն գեղարվեստական հաճույքը վայելել, որին վերահասու էին նրանց ժամանակակիցները Անգլիայում: XVIII դարի հայ գրականության մեջ դա մանկապատանեկան ընթերցանության առաջին երկն էր: Հայ պատանիները մինչ այդ դաստիարակվում էին խրատական բնույթի գրքերով, բարոյական խորհուրդ պարունակող առակներով ու կրոնական առասպելներով, նախնիներին վերաբերող պատմություններով: Ժամանակակից մարդը և մանավանդ մանուկը՝ որպես գրական հերոս, նրանց անծանոթ էր:

«Ռոբինզոն Կրուզոյի արկածները» վեպը հայկական որոշ շրջաններում հայտնի էր: Շահամիրյանի «Ռոգայթ փառացի» շապիկը զարդարում էր «Ռոբինզոն Կրուզոյի» անգլիական հրատարակության հայտնի նկարազարդումներին մեկը՝ վկայությունն այն բանի, որ Շահամիրյանի տանը այդ գիրքը եղել է և անկասկած ընթերցվել: Հայ համայնքի լայն խավերին այն դեռևս անծանոթ էր: Սակայն «Ռոբինզոն Կրուզոյի» նկարազարդումն օգտագործելն անգամ ցույց է տալիս, թե հայ գործիչներին որքան մոտ էր վեպում արտահայտված գաղափարախոսությունը: Ինչպես «Տելեմաքի արկածներում» նրանք գրտան իրենց ռեզորող քաղաքական նոր գաղափարների գեղարվեստական արտահայտությունը, այնպես էլ Դեֆոյի վեպում և «Ջեկի արկածներում» նրանց զրավեց բարոյաէթիկական, մանկավարժական հայացքների ողջ համադրությունը:

Եվ ահա, «Ազդարարի» համար թարգմանվում է «Ռոբինզոն Կրուզոյին» լուսավորական մոտ, սակայն ծավալով ամսագրին ավելի համապատասխան մի գործ: Ամսագրի սեղմ շրջանակներում հայ ընթերցողին ներկայացվեց Դեֆոյի վեպի նման զրավիչ, արկածային, ճանապարհորդական սյուժեով մի ստեղծագործություն, ժամանակակից իր հերոսով, անմարդաբնակ կղզում վարած նրա ռոբինզոնյան կյանքով և ընդհանրապես եռանդուն, աշխատունակ մարդու կյանքի ուսանելի դրական փորձով: XVIII դարի ֆեոդալական ռազմի սխրանքի իդեալին հակադրվեց ստեղծարար աշխատանքի, օգտակար գործունեության իդեալը: Դեֆոն առաջինն էր, որ տվեց դրա հանճարեղ գեղարվեստական մարմնավորումը: Իդուր չէ, որ Ռուսոն, որի մանկավարժության մեծնահիմնական դրույթներին մեկը երեխայի աշխատանքային դաստիարակության պահանջն է, իր էմիլին խորհուրդ էր տալիս մինչև 16 տարեկան հասակը «Աստվածաշնչից» բացի կարդալ միայն մի գիրք՝ «Ռոբինզոն Կրուզոյին»: Շահամիրյանի գրքում «Ռոբինզոն Կրուզոյի» նկարազարդումը օգտագործելը և «Ազդարարում» Դեֆոյի վեպի տպագրությունը գաղափարական նույն միտումի արտահայտություններն էին՝ ցույց տալ, թե ինչպես աշխատասիրությունը, կամք և եռանդ գործադրելը, անդուլ ջանքերը ոչնչից ամեն ինչ են:

ստեղծում: Դեֆոյի և Դեյի հերոսների անմարդաբնակ կղզում գոյատևելու փորձը այդ էր ապացուցում: Զեկի ընկեցիկ լինելու հանգամանքը և այն, որ նրան որդեգրողը մի աղքատ և անուժ ծերունի էր, նպատակամղված էր շեշտելու նույն միտքը՝ որ կյանքում հերոսը ամեն ինչով պարտական էր ինքն իրեն: Դա կոչ էր գաղութահայությունը վստահել սեփական ուժերին, գործել, եռանդ և կամք դրսևորել: «Զի ոչ հաճի տեր միայն դադոթս, այլ կամի և գործ», «հավատք առանց գործոց մեռեալ են», «բաղինեցեք զի բացի ձեզ» — սրանք «Հայորդի հայի» կոչերն էին<sup>31</sup>: «Թե չհաջողի մին փորձեալ վերստին», — խորհուրդ է տալիս «Ազդարարի» մյուս թղթակիցը՝ «Բարեկամ» ծածկանունով<sup>32</sup>: Հայ ժողովրդի վերածնունդը և ազատագրությունը իրականացնելու համար խոսքից գործի անցնելու կոչեր էին սրանք:

Աշխատասիրության փառաբանությունը «Ազդարարի» էջերում չպետք է տառացիորեն հասկանալ, դա ունի նույն լայն իմաստը, ինչ որ Արևմուտքի լուսավորիչների մոտ: Վոլտերի փիլիսոփայական պատմվածքի հերոսի՝ Կանդիդի վերջնական եզրակացությունն է՝ «մշակենք մեր այգին»: Նույնանման դրական իդեալի է հանգեցնում Գյոթեն իր Վիլհելմ Մայստերին և տասնամյակներ հետո՝ Ֆաուստին, Շամիսոն — Պետեր Ելեմիրին և այլն:

Ռուսոյի անգլիացի հետևորդ Դեյի վիպակի հիմքում ընկած է աշխատանքային դաստիարակության միջոցով հասարակության ազատ և անկախ, օգտակար քաղաքացիներ դաստիարակելու միտքը: Ռուսոյի մանկավարժությունն այս թեզն է, որ ամենից մոտ է հայ լուսավորիչներին և անվերապահորեն ընդունվում է նրանց կողմից:

Հայ գործիչների հրապարակախոսական երկերում, ինչպես նաև «Ազդարարում», ամենաշեշտված թեզերից է ծուլությունը որպես անձնական և հասարակական շարիք դիտելը: Ամսագրում տպագրվում են ծուլությունը խարազանող առակներ և բանաստեղծություններ<sup>33</sup>: «Ազդարարի» վերջին համարում տեղ է գտել Խոջամալ Սաֆարյանի Թարգմանությամբ 1792 թ. Լեզհորնում հրատարակված ֆրանսիացի բնախույզներ Բյուֆոնի և Բոնարի մեղունների մասին աշխատությունից մի հատված<sup>34</sup>: XVIII դարում ընդունված էր բնափիլիսոփայական բնույթի հետազոտությունները («Մեղունների կյանքը», «Մադիկների բանականությունը», «Մրջյունների կյանքը» և այլն) սերտորեն առնչել մարդկային հասարակության վերաբերյալ խորհրդածությունների հետ: Դրանց նպատակն էր բնության օրինակով մարդկանց ալտրուիզմի, առաքինության, աշխատասիրության դասեր տալ:

«Անձի կատարելագործման» հասկացությունը հայ իրականության մեջ որոշակի նպատակ էր հետապնդում: Արևմուտքում այն ենթադրում էր ֆեոդալական կացութաձևից բուրժուականին անցնելը, որը զարգացում և առաջընթաց էր նշանակում: Հայ լուսավորիչները անձի կատարելագործումն ըմբռնեցին որպես նախապայման այն բանի, որ կրթվելու, լուսավորվելու, համախմբվելու և սովորելու ինքնագիտակցության գալու միջոցով գաղութահայությունը ի վիճակի լիներ իրականացնել մայր հայրենիքի ազատագրության վաղեմի իդեալ: Հենց դրանով էլ պայմանավորվեց XVIII դարի վերջի հայ մանկավարժության և ընդհանրապես լուսավորական գաղափարախոսության մի բընորոշ գիծը: Շմավոնյանը և մյուս հայ գործիչները ուզում էին դաստիարակել ոչ թե հայ վաճառական-քաղաքացու, որի մտահոգության առարկան միայն սեփական բարօրությունն է, այլ քաղաքացի հայրենասերի: Անգլիացի լուսա-

31 «Ազդարար». 1795, էջ 309:

32 Նույն տեղում, էջ 70, 71:

33 Տե՛ս էջ 697—699, առակ ձիու մասին, որը չցանկացավ կիսել ավանակի բեռը և երբ վերջինս ընկավ, ստիպված էր իր վրա վերցնել ողջ ծանրությունը: էջ 63, առակ կնոջ մասին, որը մանկուց վարժված չէր աշխատանքի և այլն:

34 Համառոտ պատմություն մեղուաց, արտահանեալ ի բնազնական պատմութենէ մօնսիո Պյուֆօնի և մօնսիո Պօնարի քաջ բնազնաց գաղիացոց. «Ազդարար», 1796, էջ 727—736:

վորիչները դաստիարակում էին քաղաքացու, որը օգտակար էր նախ իրեն, ապա ուրիշներին: Նրանք հասարակության բարօրությունն ըմբռնում էին որպես առանձին անհատների մասնավոր շահերի բավարարման հանրագումար: Հալ լուսավորիչները առաջ էին քաշում ոչ թե առաքինի սեփականատիրոջ իդեալը, ինչպես դա արված էր, օրինակ, Բ. Ֆրանկլինի «Բարեկարգ Ռիչարդի խրատները» (1757 թ.) գրքում, այլ առաքինի քաղաքացու և հայրենասերի իդեալը, որը իր երջանկությունը տեսնում է առաջին հերթին հայ համայնքին, աղգին օգտակար լինելու մեջ: Հ. Շմավոնյանին և նրա համախոհներին խորթ է բուրժուական գործարարության քարոզը: Նրանք ուզում են դաստիարակել հայ համայնքի այնպիսի անդամի, որը հեռու լինելու եսասիրական ձգտումներից և անձնական բարօրությունն ամեն ինչից վեր դասելուց: «Աղղարարի» թղթակից «Աղղարիցը» «Հայուրդի Հային» ուղղված նամակում կշտամբանքով է խոսում նրանց մասին, ովքեր «փոքրուց սովորել են միայն մի բանի, ինչպես է ժամանակն և թանկ ծախել»<sup>35</sup>:

Գաղափարական և բարոյական այսպիսի մթնոլորտը պայմանավորեց բարեգործության այն լայն տարածումը, որով հռչակվեցին Մադրասի հայ մեծահարուստները: «Աղղարարը» անընդհատ կոչ էր անում հարուստներին բարեգործությանը աջակցել աղգի վերածննդի գործին: Ջեկի օրինակով ցույց էր տալիս, որ նյութական բարօրության հասած անձի առաջին հոգսը պետք է լինի օգնության ձեռք մեկնել կարիքավորներին:

Դեյի վիպակի գրավչությունը «Աղղարարի» աշխատակիցների աչքում կրկնապատկվում էր հենց բարեգործության քարոզով: Ջեկը, նյութական ապահովության հասնելով, ոչ թե ցոփ կյանք է վարում, այլ իր առաջին պարտքն է համարում օգնել աղքատներին: Սա ընկալվեց որպես վիպակի հերոսի մեծագույն առաքինությունը և ընդգծվեց հայերեն վերնագրի մեջ՝ «աշխատեցավ անօգնական և ի վաղճանի էգիտ մխիթարություն կարողութեան օգնական լինել աղքատաց», — մի բան, որ չկա անգլերեն բնագրում: «Աղղարարի» քարոզածը արդյունավետ հայրենասիրությունն էր: Հայրենասիրական զգացմունքների դաստիարակության հետևանքը պետք է լինել գործնական քայլերի դիմելը: Այս իմաստով բնութագրական է, որ «Աղղարարում» տպագրված ամենածավալուն գործը (մոտ 120 էջ) XVIII դարի երկրորդ կեսին Հնդկաստանում ծալր առած աղգային-աղատագրական պայքարի առաջնորդ Հեյդար Ալի խանի կենսագրությունն է<sup>36</sup>: Նրա հեղինակն էր վաճառական Հակոբ Սիմոնյան Այուբյանցը<sup>37</sup>, Շմավոնյանի հրատարակչական գործի եռանդուն մասնակիցը և աջակիցը, բանասիրական հարուստ դիտելիքների տեր մի անձնավորություն, որն իր գործին կից ներկայացրել էր իր կազմած հայ պատմիչների անտիպ դործերի առաջին մատենագիտական ցանկը: Եթե Հ. էմինի «Հուշագրությունները» (1792 թ.) XVIII դարի վերջի «հայրենասիրական ինքնակենսագրություն» բացառիկ նմուշ է, ապա Հեյդար Ալի խանի կենսագրությունը կարող է դիտվել որպես հայ հեղինակի գրչին պատկանող «հայրենասիրական կենսագրություն» եզակի օրինակ: Այն գործուն հայրենասիրություն, հայրենիքը օտար նվաճողներից ազատագրելու օրինակ էր:

Առաջաբանում Այուբյանցը նշում է, որ որոշել է գրել իր ժամանակի մեծածախս զորավար Հեյդար Ալի խանի պատմությունը «առ ի յօգուտ մերազնեից և նորաբողբոջ դեռավարժից», որպեսզի նրանք օրինակ վերցնեն, թե ինչպես պետք է ծառայել հայրենիքին:

35 «Աղղարար». 1795, էջ 318:

36 Վարք, արարմունք և բարբ ճարտարագունեղ բանաստեղծի, նավար Հեյդարալի խանի և մեծ սպարապետ Հնդկաց Սըրնգաթան քաղաքի Յարմարեցեալ և շարադրեցեալ Սիմոնյան Հակոբ Այուբյանց... Ի օգուտ և ի ղվարճութեան աղգին Հայոց. «Աղղարար», 1795, էջ 186: Տպագրվել է 18 համարներում:

37 Տե՛ս Բ. Ա. Աբրաмян. Армянские источники XVIII века об Индии. Ереван, 1968.

Այսպիսով, մենք տեսնում ենք, թե ինչպիսի նոր երանգավորում է ստանում աշխատասիրության, եռանդի, գործարարության Դեֆոյի գովերգությունը և Ռուսոյի ու նրա հետևորդ Դեյի աշխատանքային դաստիարակության պահանջը հայ լուսավորիչների մոտ: Բնական է, որ Արևմուտքի լուսավորական գաղափարախոսությունը նրանք պետք է յուրացնեին միայն մասնակիորեն, այնքանով, որքանով գա համապատասխանում էր գաղութահայության կյանքի առաջադրած խնդիրներին և նպաստում էր սեփական ավագային ծրագրերի իրականացմանը: Նրանց, օրինակ, խորթ մնացին Ռուսոյի քաղաքակրթության քննադատությունը: Երեխայի ֆիզիկական դաստիարակության թեզը նույնպես մի առ ժամանակ անարձագանք է մնում: Դեյի վիպակում ընդգծված էր Ռուսոյի մյուս թեզը՝ որ աշխատավոր մարդկանց երեխաները ավելի ճիշտ են դաստիարակվում: «Ազդարարին» մոտ է այս դեմոկրատական հարցադրումը:

«Ազդարարի» դեմոկրատական համակրությունները պարզորոշ դրսևորվել են նրա շատ նյութերում: Քանի որ մայր հայրենիքի ազատագրության և շենացման գործը չէր դիտվում որպես միայն համայնքի վերնախավի գործունեության մենաշնորհը, լուսավորություն տարածելու հարցում ևս հայ գործիչները պետք է առաջնորդվեին միասնականության սկզբունքով: Շմալնյանի և նրա գործակիցների կրթություն և լուսավորություն տարածելու ծրագիրը նկատի ունեւ որչ հնդկահայ գաղութը: «Բացեք դպրատուն ըստ այլոց ազգաց և մուծեք ի նա զորդիքս գոհակաց», — ասում է ամսագրի թղթակից «Բարեկամը»՝ կոչելով կրթություն տալ աշխատավոր մարդկանց երեխաներին<sup>38</sup>:

«Ջեկի պատմությունը» ուրիշ թելերով ևս կապվում էր հայ լրագրողների գաղափարախոսության հետ: Դրանցից է գաղութարարությանը բացասաբար վերաբերվելը և ոչ քաղաքակրթված բնիկներին բացահայտորեն համակրանքով վերաբերվելն ու զրական ձևով բնութագրելը: Հնդկաստանում անգլիական տիրապետության հետևանքներից մեկը եղավ հայ գաղթօջախի տնտեսական քայքայումը: Միաժամանակ, առաջադեմ հայ գործիչները գիտակցում էին այդ երևույթի բացասական կողմերը նաև Հնդկաստանի պատմական ճակատագրի համար: Գաղութահայությանը չէր կարող չգրավել նաև «Ջեկի պատմության» «արևելյան» թեման, այն, որ «անմարդաբնակ կղզին» գտնվում էր Հնդկական օվկիանոսում, հայ ծովագնաց-վաճառականներին ծանոթ Կոմորյան կղզիների շրջանում և այն, որ Ջեկը հայտնվում է Հնդկաստանում և շփման մեջ է մտնում բնիկների հետ:

Ո՞վ է «Ջեկի պատմության» հայ թարգմանիչը, արդյոք նա ի՞նքն է նյութի ընտրությունը կատարել, թե՞ առաջնորդվել է ինչ-որ մեկի խորհրդով և ո՞վ է այդ մեկը: Այս հարցերին թերևս մի օր պատասխան տրվի:

1790-ական թթ. կեսերի անգլիական մանկապատանեկան գրականության առավել ճանաչված հեղինակի, Ռուսոյի ջերմեռանդ հետևորդ Դեյի գործի հայերեն թարգմանությունը և սպագրությունը (անգլերեն հրատարակությունից ընդամենը հինգ տարի հետո) վկայում է այն մասին, որ հայերեն հրատարակության նախաձեռնողը կամ տեղի կրթված, ազատախոհ անգլիացիների հետ շփման մեջ էր<sup>39</sup>, կամ էլ ինքն էր քաջատեղյակ ընթացիկ գրականության նորություններին: Ինչպես էլ որ լինի, «Ջեկի պատմության» սպագրությունը «Ազդարարում» նշանակալից երևույթ է: Դա հայ ընթերցողի կողմից անգլիական գեղարվեստական գրականության լավագույն նմուշների հետ ծանոթանալու երկարամյա ուղու սկիզբն է:

38 «Ազդարար». 1795, էջ 72 (70—78):

39 Լեոն, անդրադառնալով «Որոգայթ փառացին», գտնում է, որ Մադրասի քաղաքական ընտանիքում անպայման եղել է մի եվրոպացի խորհրդատու և գործակից: «Այստեղ մանավանդ, — գրում է Լեոն, — անհրաժեշտ էր մի եվրոպացու մասնակցությունը: Մենք նորից կրկնենք ուզում մեր մի անգամ հայտնած ենթադրությունը, թե այդ եվրոպացին կարող էր լինել մի անգլիացի, որը գուցե դաստիարակի պաշտոն էր կատարում Շահամիրյանի ընտանիքում» (տե՛ս Լեոն. Երկերի ժողովածու. հ. 3, Երևան, 1973, էջ 537):

## АНГЛИЙСКИЙ ПОСЛЕДОВАТЕЛЬ РУССО НА СТРАНИЦАХ «АЗДАРАРА»

М. М. АСЛАНЯН

(Резюме)

«Аздарар» — первенец армянской периодической печати, ежемесячник, издававшийся в Мадрасе в 1794—1796 гг. Переводная художественная проза этого журнала мало изучена. Достаточно сказать, что ни один автор переведенных произведений, напечатанных, как правило, анонимно, до сих пор не был выявлен. Остались, следовательно, неизвестными и оригиналы этих переводов. Между тем без знания оригиналов и творчества их авторов в целом, а также их места в литературном процессе своей страны невозможно определить подлинный характер связей «Аздарара» с просветительской идеологией и литературой XVIII в. Нам удалось установить, что автором повести «История маленького Джека» («Аздарар», № 2—4, IX.1794—1.1795) является известный английский детский писатель конца XVIII в. Томас Дей (Thomas Day, 1748—1789). Почитатель французских энциклопедистов, видный радикал, публицист, поборник парламентской реформы и сторонник Американской революции, Дей был самым ревностным и последовательным приверженцем Ж.-Ж. Руссо в Англии. Своими книгами для детей, в особенности романом «Сэндфорд и Мертон» (английской разновидностью «Эмиля»), Дей сыграл огромную роль в распространении педагогических идей Руссо в Англии. «Аздарар», ратовавший за воспитание новой личности, на страницах которого формировался идеал трудолюбивого, деятельного, нравственного, полезного для армянской общины гражданина и патриота, способного служить делу национального возрождения и освобождения армян, в повести Дея («The History of Little Jack», 1788) нашел художественное воплощение новых педагогических принципов воспитания такой личности и положительных результатов его жизненной практики. Таким образом, благодаря публикации повести Т. Дея «Аздарар» стал первым распространителем педагогических идей Руссо в армянской среде.